

Բայց ոչ բովանդակն, այլ զայն միայն, որ ի վերայ Երուսաղէմի քաղաքին, և Հրէից ազգին պատերազմունք յարեան՝ որ է վեց հատոր: Եւ երկրորդ՝ Գիտնէսիոսի արիսպագացւոյ գիրք, զի թէպէտև առաջին թարգմանեալն Ստեփանոսի Սինեցւոյ զոյր ի մէջ մեր, այն համառօտաբօս և դժուարականալի էր, իսկ սորայս թարգմանեալն ևս նոյն է, բայց դիւրահասկանալի է՝ որ ոչինչ մնայ անհաս յընթերցողն, զի մեկ-նութիւնն յաճախ է և դիւրահաս: Եւ երրորդ գիրք՝ որոյ անունն է գիրք պատճառաց, այլ և կոչնն զեա ի վեր քան զբնական, որ է Աստուածաբանութեան գիրք, զի Աստուածաբանութիւն է ամենայն բան նորա՝ և է ինքն պրակք երեսուն և վեց: Չորրորդն գիրք՝ բանք առաւկաւորք՝ որ զվարուց և զվեցաղապարութենէ մարդկան պատմէ իբր թէ օրինակ ամենայն մարդկան, որոյ մակագրութիւնն էր լատինականաւ լեզուան, հայելի վարուց. և յորժամ թարգմանեցին ի Հայոց լեզուս այլուի գնոյն մակագրութիւն մակագրեցին հայելի վարուց, և յորժ համեղ և ակոյրժ են բանք այսորիկ զոյր: Արդ՝ մինչև ցարդ՝ այսօրն զարդիւնս արար սա յեկեղեցին Հայոց»։ (Տես զՊատմութիւն Առաքել վարդապետի (Ամստերդամ) յէջ 398-400):

ՄԵՍՐՈՎ Գ. Յ. ՍԵԹԵԱՆՏ

(Շարունակելի)

Նութիւնք Ստեփանոս վարդապետի իւրկացւոյ զորոյ յիշատակէ յականէ յանուանէ պատմագիրն Առաքել յիւրում պատմութեան: Տպագրեցան արդեօք յայնորիկ թէ յանկան փոշւոյ եզնն ցեցակեր ի վանս Սրբոյ Էջմիածնի:

Ձ Ա Ր

Ռուսական այս բառը, ինչպէս նաև գերմանական քայգէրը, յառաջ եկած են լատին caesar = կայսր-ի (imperator) իմաստով: Ռուս լեզուին մէջ ձուր կը նշանակէ բազաւոր և ոչ կայսր՝ որ աւելի ընդարձակ և գերազայն իմաստ ունի և յիլաւի ռուս արքայն կոչուած էր կայսր (imperator) ամբողջ Ռուսաց և ծարճազանի, Աստրախանի. Սիպերիոյ և այլն: Ռուսը ուրիշ թագաւորները կը կոչեն цари.

Ռուսաստանի կայսերը կը պարծէին թէ Արեւելեան կայսրութեան ժառանգներ են, վասն զի իւրան Գ. ամուսնացաւ 1472ին թովմաս Պալէոլոկի Արեւելի վերջին կայսեր եղբոր զստեմ Սոֆիայի հետ. անոր համար և. Պալէոլոս ռուսերէն կը կոչուի Ձարիկըստ «Քաղաք Ձարին»:

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՆՈՒԳԻՐՔ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

ԺԴ.

ՀէֆիՄԱՐԱՆ ՍԻՄԵՈՆ ԿԱՄԱՐԿԱՊՅԻՒ

(Շար. տես Բաղմ. 1924, էջ 74)

Յիշատակարանները հետեւեալներն են.

- « ԳԻՐՔՍ ՈՐ ԿՈՉԻ ՀէֆիՄԱՐԱՆ »
- « ԱՐԱՐԵԱԼ Ի ՅԵՄԱՍՏՈՒՆ ԲԺՇԿԱՊԵՏԱՅՆ »
- « Օղեւն՝ հոյի Սորբ Աստուած Հմարիտ »
- « ԳՐԻԵԱԼ ԵՂԵԻ Ի ՆՈՒԱՍՏԷ »
- « ՓՐԿԻԶԻՆ ԵԱՌԱՅ ՍԻՄԵՈՆԷ »
- « ԱՅԱՅՑ ԳԻՒԼԷՆ ԿԱՄԵՐԿԱՊԵ »
- « ԱՐՈՒԵՏՏԸ ԻՐ ՍԱՌԱՅ Է »
- « ԵՒ ՀՈՐՆ ԱՆՈՒՆՆ ԳՐԻԳՈՐԻԷ »
- « ԸՆԹԵՐՑՈՂՆ ՈՂՈՐՄԻՍ ՏԱՅԷ »
- « ՄԻՈՑ ՀԱՅՐ ՄԵՐԻԻ ԱՄԷՆ »

« Եւ իմ կենաց մէջն ինչ որ յսեր եմ
« փորձեր եմ քե մեղի որ պատահեր է,
« կամ այլոց, ամենն ի յայս ցրբոյս գրեցի
« առ ի յիւնոյ յիշատակի համար. որ և
« յիշատակն արդարոց օրհնաբեամբ եղիցի,
« եղիցի. Ամեն:

« Որ և գրեցաւ տետրակս ի բռնակահա
Հայոց Ռաիդ. յունվարի Ա.

« Ի Մայրաքաղաքն Ըստամպոյ

« Ի լնչին Եօտար Յարոսթենէ վասպու
բականցոյ կղ. գծագրեցեալ

Յայտնի է որ Հէքիմարանիս Հեղինակը ինքն է սոյն տողերուն զրոյրը, այսինքն Ակնայ կամարկապ գիւղացի Սիմեոն Գրիգորեան՝ արհեստով առաաֆ (լուծալափոխ) եղող անձը, որ կ'երևի՝ միանգամայն բժշկութեամբ ալ կը պարապի եղբր, բայց այս հատորին բուն գրիչը՝ ինչպէս կը

սորվինք վերջին տողերէն, վատագորտա-
կանցի Յարութիւն Նօտարն է, որ 1785
յունուար 1ին կ'ընդօրինակէ զայն:

Թեբեւս՝ Սիմէոն Կամարկապցի այդ
թուականէն շատ առաջ պատրաստած էր
իւր Հէքիմարանը, ծաղկաքաղելով այլ և
այլ բժիշկներու աշխատութիւններէն, և
զայն յետոյ արտագրել կամ ի մի ամփո-
փել տուաւ վասպուրականցի Բարութիւ-
նին, գեղեցիկ գիր ունենալուն համար, զի
նօտար՝ հին և հնազոյն առումով կը նշա-
նակէ՝ մարտի գիր գրող կամ գրի դաս
տուող:

Յաւալի է սակայն տեսնալ, որ շատ
անգամներ այսպիսի Նօտարներ՝ ընդօրին-
նակիչներ իրենց անունը այնպէս մը կը
ըլլան, իբր թէ բուն հեղինակը իրենց եղած
լրջալին: Վերոգրեալ Յիշատակարանին
մէջ թէն չիկայ այսպիսի շփոթութիւն,
բայց երբ Մարգարկազմութեան վրայ խօ-
սող գլուխը կարդանք, հոն կը տեսնանք
որ բոլորովին անարմար կերպով Վասպու-
րականցին կը գրէ:

« Եւ յիշեցնեմ զանործեմ գրիւս զիւլին
Յարութիւնս վանցի ի Տէր Յիսուս »

տողերը, որոնք կրնային Սիմոն կամար-
կապցիին տեղը գինքը ընդունիլ տալ,
եթէ ուշադրութիւն չըլլուի:

*

Իսկ յիշատակուած Ռտանաւորը հետե-
ւեալն է, վերնագիր ունենալով՝ Առաջարա-
նօրինէ բառը, և « Ռտանաոր զարմանալիս,
յոյժ գեղեցիկ և սրխարի » շողշողուն տիտ-
ղոսը:

« Համարց գոյից բասեղծօ Դին.
« Հօր Աստուծոյ անբասեղ ծին.
« Անձառ որդոյ Սոսրբ միած եին.
« անհասն Հոգոյ միշտ բրդիտ Դին.
« Այժմ և անկետ յաւիտեմ եին.
« տացոյց ըզփաստս՝ և ըզպա տին.
« Որ ետ մեզ կար խորով օծ տին.
« գրիւս զսոյն ախորժ սրտ տին.
« Որք հանդիպիք զսոյս կարդա յով.

« ձեր անպիտան ծառայս զո յով.
« Թիշիլ յաղօրս ձեր Սի յով.
« Մի՛ դոհդալիք զանց ասնե յով.
« Յօղ տրտօսից ձերոց իջ ցին.
« և զանկերոյս հատ քոստոս ցին.
« Ձի գիս ընդ ձեզ Տէրն երբ ցայ ցին.
« յամբար իտր Սոսրբ ժողովես ցին.

« Անկ | Ե | Ե | Ե

« Սիմեօն յարութեամբս Դի.
« զերբ անասուն յախտս մո Դի.
« Ի քրայս հայիմ այլ զես ժան կոտ.
« բարեաց հետի աս յարեմ մօտ.
« Մի՛ անխմաստ յինիմ կո տակ.
« քանգի գիտեմ քե միտս է իսակ.
« Էմանուէլ այց արաս ցես.
« Ըզիտաց սրբոսիս թշկես ցես.
« Որ վատբարեայ զինիմ տո պատտ.
« ես անարի և անբզ զստտ.
« Նոսաստ ոգի և անբզ զօն.
« ամբարմառա՛ն և քարձա՛ն յօն.

Աւելորդ է ըսել, թէ սոյն սրխարի!!!
կոչուած Ռտանաւորը բժշկական տեսա-
կէտով ոչ մէկ արժէք չի ներկայացնել, և
միայն ու միայն ցոյց կու տայ համեստու-
թիւնը Սիմէոն Կամարկապցիի, որ՝ պէտք
է ընդունիլ, թէ իր այս աշխատութեամբ,
18րդ դարու Հայ բժշկական պատմութեան
նոր էջ մը կը յաւելու:

*

Հէքիմարանիս Բառաջարանութիւնը
կազմող այս Ռտանաւորէն անմիջապէս
յետոյ կը սկսի Մարգարկազմութիւնը, որ
ինքնին թէն Միսիթար Հերացիի, Ամիր-
տովմաթի կամ Ասարի գրի առած մար-
դակազմութիւններուն գիտական ոճը կամ
կնիքը չունի, բայց դարձեալ զուրկ չէ
հետաքրքրութիւն շարժելու յատկութենէ:
Հարց պատասխանի ձևով է ամբողջ
գրուածը.

Կը հարցնէ՞. Վասն էր զմարդն ի հոդոյ
ստեղծ և ասաց հող և ջուր, հով
և հուր.

կը պատասխանէ՝ Զմարդն վասն այն ի հողոյ ստեղծ Աստուած ընդ չրոյն չաղունց որպէս ասէ գիր՝ հաս հող ի Սիօնէ, և արար կառ, և ստեղծ զսղամ, զի աղամ կառ բարքմանի. և փշկաց ի նա շունչ կենդանութեան, և եղ նմա հոգի անմահ որ է հոգի և յոյս, զի ի մեռանել մարդոյն քամին և կրակն ելանէ, և մնալ հող և շուր անշունչ և անհոգի:

Իւ այսպէս՝ Աստուածաշունչէն Արարչին ստեղծագործութեան պատմութիւնը գրեթէ նոյնութեամբ քաղելով, կը սկսի մարդու սաղմնաւորութեան մասին խօսիլ, ու կը գրէ՝ «Թարժամ տնկի մանուկն յորս» «վայն մօրն ընդ պորտն ասնոս գկերակորն» «որպէս սեխ և դդում»:

«Իսկ ի ստեղծմանն հայս սիրտն զյուս» «նայ, Մանուկն յորովայն մօրն ի կանգուն» «կայ, և ի ծնանիւն ասպս գլխի վայոյ դաս» «նայ, որ նշանակէ զանկումն մարդոյն, իսկ «ի յաւազանին գլխի վեր մկրտեմք, և «վերստին կանգնելի դարձնայ ի քրիստոս» «նշանակեմք»:

Ներարգանդային կեանքին մէջ մանուկին պորտին միջոցաւ սնանիլը, սեխի և դդումի սննդառութեանը նմանցնելը բաւական ծիծաղաշարժ է. բայց այս բոլորը գրուած է արդէն Գրիգոր Նիւսացիի «Գիրք յնորսեան Մարդոյ» գործին մէջ, և գրեթէ կատարեալ նմանութեամբ ընդօրինակած է անկէ, ինչպէս հաստատեցի զայս՝ երկու ձեռագիրներուն բաղդատութիւնն ընելով:

*

Մանուկը կը ծնցնէ կամարկապցի, ինն և եօթն ամիսն, և կ'ըսէ թէ այս ամիսներուն ծնածները կ'ապրին, բայց ութնը բոլոր ամսուն ծնածները ոչ, քանզի 9 թիւը խորհրդաւոր է. յետոյ երկուսուսան համաստեղութեան ազդեցութեան ներքեւ մանուկին մարմնոյ ալ և ալ մասերը շինելէ ու կերտելէ յետոյ՝ կը գրէ.

«Երէ աչաց չորն չիւր աղի, հա քրաւ»

«գուն հայեր աչացն, և յոսոյն զէն ասեկր» «թէ անանչին չիւր լիցի նա սողունք մուս» «եկին ընդ այն և զգեղն անքէին և մարդն» «չարածաղիկ լինէր»:

Կ'ընդունի թէ 365 ոսկոր կայ մարդու վրայ, և կ'ըսէ՝ «Է փերթն գանկն է, ԺԲ «երկուքն և կզակն է, 1Բ աստամն է, Է շիրքն «է, Է այլ կայ որ շիցն վարի դին է. Է «կոտրն է, ԺԺ ողնաշարն է, ԺԺ կոշն է. «բիկունքն Բ քեան է. վեց բաղաւկն է, Խ «ձեռաց կոճն է. Դ ստեկրն է, Բ անդամն «է. Բ յիսեան է. Բ ոյրքն է. Բ կոճն է. «Խ ոսից անդրերն է»:

Անշուշտ արդի գիտութեան մէջ մարդու կային ոսկորներուն թիւը և կարգը բոլորովին տարբեր կերպով նշանակուած է, ինչպէս նաև երակներուն թիւը, զոր կամ մարկապցի 65 հատի կը հասցնէ:

*

Յետոյ Գլուխի, ուղեղի, աչքի, ականջի, ըիթի, բերանի, սրտին, թոքին, փայծաղին, երիկամի, լերդի, միզաբուշտի կազմութիւնը իր գիտցած ու ըմբռնած ձևով ներկայացնելէ յետոյ, կ'անցնի գրել մարդու բնութիւնը ճանաչելու կերպը, զոր կընանք հետաքրքրական ենթադրել, անոր միամտական ըլլալն ալ չմոռնալով հանդերձ:

Կը գրէ, թէ «Պարտ է քժկին ի մար» «դոյ կերպն նայիլ և անտի զցասն իմանալ» «և զգեղն ստածել», և այս մասին կը դնէ դիմագիտութեան համար բաւականի երկար առաջնորդող — ցուցակ մը, որ այսօր իսկ կրնայ ի պատուի նկատուիլ՝ որովհետև կը պարունակէ՝ ճշմարտութեան շատ մօտ կէտեր:

Ահաւասիկ անոր քանի մը կարեւորագոյն մասերը,

«Թէ մարդ յիւսմորք է և դիպին՝ քնոքիւնն ծանկ է.

«Թէ կարտիք է և ոպիտակ՝ հա քնոքիւնն միչակ է.

«Մարդ որ շտապով շիկի և քարձր՝ հա քնոքիւնն տաք է և չոր.

« Զայնն բարձր և հաստ՝ նա մեծ սիրտ
է և շար:

« Թե՛ ծանրախօս լինի և յոյ՝ նա ուժով է
և բանաստր:

« Մարդ բէ՛ Զայնն արեգացն հեշէ՛, սրտբան
է և շարախնդաց:

« Մարդ որ գրոյին մեծ լինի՝ նա ծոյլ է
կոպիտ և անխնայ:

« Մարդ որ գրոյին երկայն և կոկոզ է՝ նա
զգոշանոր է:

« Մարդ որ ձակասն մագու է՝ նա գազա-
նարարոյ է:

« Մարդ որ մոռոքն չափատր է՝ քարքն
աղէկ է:

« Մարդ որ աչքն բոյս և կարմրագոյն է,
նա քան զգագանն շար է:

« Մարդ որ աչքն կոկոն է՝ նա բնութեամբն
անհաստատ է:

« Մարդ որ ունքն շատ մազ է՝ նա նեղ-
սիրտ է:

« Մարդ որ քրքրոնքն հաստ է՝ նա սրա-
միտ է:

« Մարդ որ նեղ ձակատ է՝ նա շատակոյ է:

« Մարդ որ փուս ձակատ է՝ նա ամօրիտ է:

Եւ կամարկապցի իւր դիմազննական
կամ դիմագիտական այս առածները, զեռ
քիթի, ականջի, վիզի, լանջի, բազուկի,
ձեռքի և մատներու ու ոտքի այլ և այլ
ձևերու և նշաններու վրայ ալ տարածե-
լով, ապա կը յանգի սա եզրակացութեան
թէ՛

« առ հասարակ չափաւորն բարի է այս
« Էշանացու: »

ՏԵՌԹ. ԱՆԸԱՄ Յ. ԹՈՐԳՈՍԵԱՆ

Վեհեոյի — Մ. Ղազար

24 Դեկտեմբեր 1922

(շարունակելի)



Գ Ր Ա Կ Ա Ն

Զ. Ռ. ՎԱՄՄԵՆԼԼ

ԲՆԱԻ ԵՐԲԵՔ ՄԻ ՑԱԼԻԻ Բ

○ ▼ ○

Բընա երբեք մի ցաւիք:
Անցածին վրայ անօգուտ
է արդ ցաւիլ եւ ողբալ:
Լուսնակը չի փայլիլ հոն
ուր փայլեցաւ արեւակն:
Իր լոյսը մէկ յիշատակն
է մայրամուտ արեւուն,
Բայց մենք լուսնակ գիշերով
կը քաշենք անք օրուան:
Փոխ առնուած անոր լոյսն
որքան անդորր՝ աղուոր է,
Եւ յիշատակն ալ նոյնպէս
անդորր՝ աղուոր պէտք է 'լլար:
Անցածն անցած է, զուր է
ցաւիլն՝ ողբալն անոր վրայ:
Կորսուած ժամերը չեն ետ
դառնար այլ էւս, եւ սակայն
Չեմ ըսեր ես թէ՛ մոռցէք:
Ես չեմ ըսեր թէ՛ մոռցէք,
որովհետեւ կան ու կան
Յիշատակներ կորսուած
վայրկեաններու՝ սիրելի
Քան հրճուանքները բոլոր,
զոր կրնայ կեանքը տալ մեզ:
Պիտ՝ ուզէի որ ինչ ինչ
յիշատակներ մնային,
Բերկրանքն ինչ ինչ հանդիպմանց,
Կսկիծն ինչ ինչ հրաժեշտից,
Յիշատակներ գանձի պէս
պահուած, բայց ոչ երբեք ցաւն:
Կորսուած ժամերը չեն ետ
դառնար այլ էւս, եւ սակայն
Պիտի չուզեմ մոռնալիք:

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Մ Ը Գ Ա Բ Ի Ի Ի

Վայրկեաններ կան որ չեն ծնած մեռնելու:
Գաբրիի մէջ կեցած էի բարձրաբերձ
Պատըզգամի վրայ, գարուն գիշեր էր,
Եւ հեշտութիւն մը կը թըւէր ողջ աշխարհն:
Կը շնչէի շուրջը բոյրերն անուշակ
Երկրի հազար ծաղիկներու, եւ բոյրերն